# Ժառանգենք մեծերի թողածը

*Եթէ այս մարդը ապրած լինէր միջնադարում, ապա անկասկած սրբերի շարքը դասուած կը լինէր։*

**Ազգը մեծ է իր մեծերով։ Եվ մեծ է ոչ միայն այդ մեծերի գոյատեւմամբ, այլ նախեւառաջ նրանով, թե ինքը՝ ազգը, ինչպես է վերաբերվում իր մեծերին, նրանց հիշատակին, նրանց դասերին։ Մեծերը գալիս են ու գնում։ Մի ազգի մեջ նրանք համեմատաբար շատ են լինում, մյուսի մեջ՝ սակավ։ Սակայն ազգը մեծ է դառնում միայն այն դեպքում, եթե կարողանում է առավել լիիվ օգտվել իր մեծերի գոյությունից, առավել լիիվ ժառանգել նրանց մեծության, իմաստության պտուղները, սովորել նրանց դասերը։**

Ի՞նչ ենք մենք սովորել մեր մեծերից։ Ի՞նչ ենք ժառանգել նրանցից։ Աղավաղում եւ ապա ուրանում ենք Մաշտոցի լեզուն, հրաժարվում, մերժում ենք Կոմիտասի երաժշտությունը, Նարեկացու 1000-ամյակն ենք նշում օրավուր խորացնելով, ահագնացնելով մեզ խեղդող մեղքերի ծովը։ Այնինչ, մեր մեծերը մեզ բոլորովին ա՛յլ դասեր են տվել։ Եվ դա վերաբերում է ոչ միայն հեռավոր միջնադարում եւ ավելի վաղ ապրած մեծերին, այլեւ մեր ամենամոտ անցյալի մեծերին, որոնք մեր կողքին էին ընդամենը մի տասնամյակ առաջ։



Գիտության մեջ Վիկտոր Համբարձումյանի արածները այսօր տակավին դժվար է հստակ գնահատել. դեռ շատ ենք մոտ կանգնած։ Թեպետ պարզ է նաեւ, որ գիտության մեջ նրա ներդրումը համեմատելի է Կլավդիոս Պտղոմեոսի, Նիկոլայ Կոպեռնիկոսի եւ Իսահակ Նյուտոնի արածներին։ Գիտության մեջ Վ.Համբարձումյանը մեծ է ոչ միայն որպես բազմաթիվ հայտնագործությունների հեղինակ, այլ նախեւառաջ, որպես գիտական նոր աշխարհայացքի ստեղծող, Տիեզերքի մասին արմատապես նոր պատկերացման, գիտական նոր մոտեցման հիմնադիր։

*-Իմ հայացքները շատ խնդիրներում տարբերվում էին այն ժամանակվա տարածված տեսակետներից։ Այժմ աստղաֆիզիկան ավելի մեծ չափով է իրացրել էվոլյուցիոն գաղափարները։ Այժմ կարելի է պնդել, որ ակնհայտ փաստ է աստղաֆիզիկայի նոր բովանդակությունը՝ որպես գիտություն տիեզերքի զարգացման մասին։ Դա այն է, ինչին ես ձգտել եմ սկսած երեսնական թվականներից, եւ որի արդյունքներն են եղել հետեւյալ աշխատանքները.*

*1.բաց աստղակույտերի քայքայման պատկերացման մշակումը,*

*2. կրկնակի աստղերի քայքայման բացահայտումը,*

*3. Գալակտիկայի տարիքի գնահատումը,*

*4. աստղասփյուռների հայտնաբերումը*

*5. Գալակտիկաների միջուկների ակտիվ դերի բացահայտումը եւ այլն։*

Սա Վ. Համբարձումյանի արած չափազանց համեստ թվարկումն է տիեզերքի մասին արդի գիտության մեջ հիմնարար դեր ունեցած իր հայտնագործությունների։ Ընդ որում, ե՛ւ իր, ե՛ւ այլոց կողմից արված այսպիսի թվարկումների մեջ, հանիրավի բաց են թողնված նրա ոչ պակաս ծանրակշիռ ներդրումները ժամանակակից մաթեմատիկայի եւ տեսական ֆիզիկայի բնագավառներում։ Այս երկու բնագավառներում էլ Վ.Համբարձումյանի ներդրումներն այնքան մեծ ու կարեւոր են, որ դրանցից յուրաքանչյուրն իսկ բավարար կլիներ նրան քսաներորդ դարի մեծագույն գիտնականների շարքում դասելու համար։ Այսքանը՝ հպանցիկ, զուտ գիտության մեջ իր արածների մասին։ Սակայն նվազ ծանրակշիռ չէ նրա ներդրումը նաեւ գիտության կազմակերպման ասպարեզում։ 1943-ից 1993 թթ., ամբողջ կես դար, նա ղեկավարել է Հայաստանի գիտությունների ակադեմիան (առաջին չորս տարին որպես փոխպրեզիդենտ, ապա 46 տարի անընդմեջ՝ պրեզիդենտ)։ Ընդ որում, այդ ընթացքում Հայաստանի ակադեմիան հասել էր Խորհրդային Միության մեջ բացառիկ բարձր հեղինակության։ Վ. Համբարձումյանը եղել է Միջազգային աստղագիտական միության փոխպրեզիդենտ եւ ապա՝ պրեզիդենտ։ Եվ ի վերջո, եղել է Գիտական միությունների խորհրդի պրեզիդենտ եւ այն էլ՝ բացառության կարգով՝ երկու անգամ (հակառակ կանոնադրությամբ սահմանված արգելքի)։ Սա չափազանց սեղմ ու թռուցիկ թվարկումն է ազգային եւ միջազգային գիտության կազմակերպման ասպարեզում Վ.Համբարձումյանի արածի։

Համբարձումյանի մասին դեռ կենդանության օրոք լեգենդներ էին պատմում։ Շատ էր հոլովվում նրա կենցաղը։ Ես՝ ինքս, երբ նոր էի աշխատանքի ընդունվել Բյուրականի աստղադիտարան, գլուխս լցված Համբարձումյանի մասին ժողովրդական բանահյուսության բազմաթիվ վառ նմուշներով, մի առիթով հարցրի հիմնարկի հաշվապահին, թե՝ Համբարձումյանի մասին հազար ու մի բաներ են պատմում. դրանք ինչքանո՞վ կապ ունեն իրականության հետ։ «Արի, արի՛,-ասաց հաշվապահը, որ երեւի շատ էր լսել նման հարցեր:-Արի քեզ ցույց տամ»։ Եվ իմ առաջ բացեց հիմնարկի ռոճակացուցակները մի քանի ամսվա, ինչքան որ ձեռքի տակ ուներ։ Բոլորի մեջ էլ առաջին տողում Վ.Համբարձումյանի անվան դիմաց աշխատավարձի թվի տեղում գծիկ էր դրված... Վ.Համբարձումյանը պարզապես աստղադիտարանից իր հասանելիք աշխատավարձը չէր ստանում։ Այն ժամանակ դա ինձ ուղղակի ապշեցրեց. բնավ չէի սպասում։ Իսկ հիմա, երբ նայում եմ Բյուրականում թանգարանի վերածված նրա տանը, տեսնում նրա կենցաղի հասարակ, ծայրահեղ համեստ պայմանները, ավելի քան հասկանալի է դառնում, որ այդպիսի կենցաղով, այդպիսի պայմաններում ապրող մարդը, բնականաբար, կարող էր իր պատկառելի ռոճիկը տարիներ շարունակ թողնել հիմնարկին։

Ինչքան մեծ էր գիտության մեջ, այնքան հասարակ էր կենցաղում, ինչքան բարձր էր իր դիրքով ու պաշտոններով, այնքան համեստ՝ իր վարք ու բարքով։

Թերեւս սա էր պատճառը, որ երկու տարի առաջ Համբարձումյանի տուն-թանգարան այցելած հյուրերից մեկը այցելության վերջում Վ. Համբարձումյանի ննջարանում մի պահ կանգնելուց հետո այն հասարակ փայտյա թախտի մոտ, որի վրա տարիներ շարունակ քնել էր մեծ գիտնականը, այսպես ամփոփեց իր ստացած տպավորությունը. *«Եթե այս մարդը ապրած լիներ միջնադարում, ապա, անկասկած, սրբերի շարքը դասված կլիներ»։*

Անշուշտ, Վ.Համբարձումյանի պես մեծ գիտնական դառնալ միայն եզակի ընտրյալներին է տրված, այն էլ՝ ի վերուստ։ Այդպիսին լինելը մեր ուժերից դուրս է։ Սակայն լինել նրա պես համեստ, անընչասեր, կենցաղում նվազագույնով բավարարվող, շատերս պետք է կարողանանք։ Անշուշտ, ոչ բոլորի ուժը կների Համբարձումյանից գիտության դասեր սովորելուն, սակայն համեստության, անընչասիրության դասեր նրանից բոլորս կարող ենք սովորել։ Եւ արժէ, որ սովորենք։

*Գրիգոր ԲՐՈՒՏՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանի տնօրեն*